



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Արդարության մարտիկները գետին տապալեցին թուրք դեսպանին. 22 հոկտեմբեր 1975

1975 հոկտեմբերի 22-ին «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» (ՀՅԱՄ) կազմակերպությունը Վիեննայում ահաբեկեց Թուրքիայի դեսպան Դանըշ Թունալիզիլին:

Այսպիսով, հայկական ազգային-ազատագրական պայքարը թեմալիզացեց մի կողմից, աշխարհը տեսավ, որ ցեղասպանության ենթարկված հայը կարող է իր բազկի ուժով հարվածել թշնամուն եւ պարտադրել արդարության ճայնի ունկնդրումը:

Արդարության մարտիկները թուրք դեսպանի ահաբեկումից հետո իրենց տարածած հայտարարության մեջ նշել են. «Մենք հայ ժողովրդի զավակներն ենք: Գործում ենք հանուն արդարության: Թուրքիայի քաղաքական ներկայացուցիչների դեմ մեր արարքը աշխարհի բոլոր մեծ ու փոքր պետություններին պիտի հիշեցնի, որ հայոց մոռացված ցեղասպանությունն անպատիժ է մնում: ...Մեր արդար դատի հետապնդման միակ միջոցը զինյալ պայքարն է»:

Առաջին գործողությունից 48 ժամ հետո՝ հոկտեմբերի 24-ին, Ֆրանսիայի սրտում, Սեն գետի կամուրջն անցնելիս, հայկական արդարությունը պահանջող բազկի կրակահերթի միջոցով գետնին տապալվեցին Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Իսմայիլ Էրեզը եւ նրա վարորդ Թալլի Զեները:

Հոկտեմբերի 22-ի զինյալ գործողության մասին «Ասոյշիեթթը» պրեսի հաղորդմամբ՝ երեք ահաբեկիչները մտել են Վիեննայի թուրքական դեսպանատուն եւ հայտնել, որ ցանկանում են տեսնել դեսպանին: Երբ նրանց առաջնորդել են վերջինիս մոտ, նրանք ստուգել են դեսպանի ինքնությունը, ապա հագուստի տակ պահված գնդացիրով նրան սպանելով՝ փախուստ են տվել դեսպանատան առջև սպասող ինքնաշարժով:

## Համբիկ Սասունյանը Հայաստանում է



Համբիկ Սասունյանը վերադարձել է հայրենիք: Այս մասին հայտնել է հենց Սասունյանը.

«Սիրելի՛ հայրենակիցներ, Ամենայն ուրախությամբ կը գրեմ պատգամ ձեր հայրենիք: Ստանդարտապես 40 տարիներ անց, պատիվ ունիմ ըլլալու Հայրենի հողի վրայ, խմել հայրենի ջուրը, շնչել օդը, եւ զգալ ընտանեկան շերմութիւնը:

Ձեր ցուցաբերած աջակցութիւնը տարիներու ընթացքին մշտական քաջալերած է զիս եւ դրական ներդրում ունեցած է իմ դժուարագոյն օրերու: Խորին շնորհակալութիւններս կ'ուզեմ յայտնել բոլոր անոնց, որոնք նամակցած են, այցելած են, եւ ընդմիջտ պահած են զիս իրենց սրտերուն մէջ: Վերջապես հասած եմ տուն...»

Սիրով՝ Համբիկ Սասունեան:

Հիշեցնենք՝ Համբիկ Սասունյանը ցմահ բանտարկության է դատապարտվել Լոս Անջելեսում 1982 թ. հունվարի 28-ին առավոտյան 9:40-ին Ուիլիզի Բուլվարի եւ Կոմսոնկ փողոցի խաչմերուկում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի՝ Քեմալ Արքքանի սպանության համար: Այդ ժամանակ նա 19 տարեկան էր: Սասունյանը 2021թ. գարնանը ազատ է արձակվել:

Նա ծնվել է 1963 թվականի հունվարի 1-ին Բեյրութում: Սասունյանը «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» (ՀՅԱՄ) գաղտնի կազմակերպության անդամ է եղել: Նա բանտարկված է եղել 38 տարի:



## Ոչինչ չի կարող խանգարել ՀՀ-ի՝ Արցախի կողքին ամուր կանգնելու առաքելությանը. Հակոբ Տեր-Խաչատուրյան

ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը հոկտեմբերի 27-29-ը իր հերթական այցն է կատարել Արցախ: ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչն իր այցելության ընթացքում ունեցել է մի շարք հանդիպումներ, խորհրդակցություններ եւ ժողովներ:

Այցելության առաջին օրը Հակոբ Տեր-Խաչատուրյանը հանդիպել է Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Կրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի եւ Արցախի Ազգային ժողովում ներկայացված ընդդիմադիր՝ «Արդարություն» եւ «Արցախի ժողովրդավարական» կուսակցությունների ղեկավարների հետ:

Այցելության երկրորդ օրվա սկզբին հանդիպում տեղի ունեցավ ԱՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Վիտալի Բալասանյանի հետ: Իսկ օրվա մնացած մասը հազեցած էր ՀՀ կազմակերպական միավորների եւ շարքերի հետ հանդիպումներով ու ժողովներով: Նախ կայացավ հանդիպում ՀՀ Արցախի երիտասարդական միության վարչության հետ, ապա գումարվեց ժողով ՀՀ Արցախի Հայ դատի հանձնախմբի հետ: Օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ նաեւ ՀՀ Արցախի ընկերական ընդլայնված ժողով շրջաններից Ստեփանակերտ ժամանած ընկերներին եւ ներկա ու նախկին պատասխանատու մարմինների հետ:

Այցելության ընթացքում Հակոբ Տեր-Խաչատուրյանը հանդիպումներ է ունեցել նաեւ ԱՀ Նախագահ Արայիկ Հարությունյանի եւ նախկին նախագահներ Արկարի Դուկասյանի, Բակո Սահակյանի հետ:

Այցելության ավարտին ՀՀ Արցախի ԿԿ-ի հետ ամփոփվել են հանդիպումների արդյունքները:

Հանդիպումների ընթացքում ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչն ընկերակցել է ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիսյանը:

Արցախ կատարած այցի կապակցությամբ «Ապառաժ»-ը գրուցել է ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի հետ: Անդրադառնալով հանդիպումների ընթացքում արծարծված թեմաներին, Հակոբ Տեր-Խաչատուրյանը նշեց, որ հիմնականում քննարկվել են Արցախի կարգավիճակին, նրա անվտանգությանը, ժողովրդի տրամադրվածությանը, Արցախ-Սփյուռք կապերի ամրապնդմանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաեւ անդրադարձ է եղել Արցախում կատարված աշխատանքին, մասնավորապես՝ տեղահանված բնակչության բնակարանային ապահովվածության եւ նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ:

ԱՀ իշխանությունների հետ ունեցած հանդիպումները Հակոբ Տեր-Խաչատուրյանն արդյունավետ համարեց՝ նշելով, որ իշխանությունների հետ ունեցած տարակարծությունները չեն կարող խոչընդոտել ՀՀ-ին՝ Արցախի կողքին կանգնելու, նրան ամեն գնով աջակցելու եւ սկսված քաղաքական ու մարդասիրական աշխատանքները շարունակելու համար: Դաշնակցության՝ Արցախի համար տարվող աշխատանքներն այս պահին ընթանում են չորս ուղղություններով: Նախ՝ միջազգային առումով Արցախի կարգավիճակի հարցի միջազգայնացում, ԵԱՀԿ

Մինսկի խմբի ձեռագրված բանակցությունների վերսկսման խթանում եւ Արցախի անկախության ճանաչման՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքի կիրառման ուղղությամբ աշխատանքներ, երկրորդ՝ ՀՀ Արցախի ԿԿ-ի միջոցով Արցախի ներքաղաքական կյանքին մասնակցություն եւ խնդիրների լուծում, երրորդ՝ ներկուսակցական առումով ներքին կազմակերպական քննարկումներ, երիտասարդության ներգրավում եւ Հայ դատի աշխատանքներ, եւ վերջապես՝ Արցախի համար մարդասիրական եւ նյութական օժանդակության տրամադրում:

Հակոբ Տեր-Խաչատուրյանը կարեւորեց ՀՀ Արցախի ԿԿ-ի եւ շրջանների կոմիտեների ու պատասխանատու ընկերների հետ հանդիպումը: Քննարկվել են Արցախի իրավիճակի, առաջնահերթությունների եւ ապագա անելիքների վերաբերյալ մի շարք հարցեր: ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչը ոչ միայն զեկուցել է Հայաստանի ու Արցախի ներկա իրավիճակի եւ աշխարհով մեկ տարվող աշխատանքների մասին, այլ նաեւ լսել է Արցախի պատասխանատու մարմինների ներկայացուցիչների կարծիքներն ու առաջարկները:

Անդրադառնալով Արցախի ապագայի վերաբերյալ Դաշնակցության տեսլականին, Հակոբ Տեր-Խաչատուրյանն ընդգծեց, որ Դաշնակցության համար անընդունելի է, որ Արցախը լինի Ադրբեյջանի գերիշխանության տակ: ՀՀ-ի օրակարգում է Արցախի՝ որպես անկախ պետության կայացումը, զարգացումը եւ միջազգային հանրության կողմից նրա անկախության ճանաչումը, որից հետո բնականոն հոլովոյթով Մայր հայրենիքի հետ վերամիավորումը:

Նրա խոսքով՝ ՀՀ-ն ոչ պատերազմի ընթացքում եւ ոչ էլ դրանից հետո չի դադարեցրել իր ողջ ներուժն ի սպաս դնել Արցախի եւ Հայաստանի հզորացմանը:

Անդրադառնալով Հայաստանում ստեղծված ճգնաժամին, Հակոբ Տեր-Խաչատուրյանը նշեց, որ այդ ճգնաժամն արդյունք է ՀՀ իշխանությունների ապագային քաղաքականության, հայրենիքը ահավոր պարտության առաջնորդելու եւ ծայրահեղ գիշումների գնալու իրենց պատրաստակամության: Այս իրավիճակն ստեղծելուց բացի, ՀՀ գործող իշխանությունները նպաստել են նաեւ ընդհանուր համազգային օրակարգի շուրջ հայության համախմբումն ապահովելու փոխարեն պառակտիչ գործունեություն ծավալելուն: «Այդ պառակտիչ գործողությունները հիմա ուզում են տեղափոխել նաեւ Սփյուռք: Ամեն ինչ արվում է դրան դիմակայելու, այդ կործանարար քաղաքականության առաջն առնելու եւ պառակտում թույլ չտալու համար», - ասել է նա:

ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչն անդրադարձավ նաեւ համայն հայության մոտ առկա ընկճվածության մթնոլորտին, որը հետեւանքն է պատերազմում կրած աղետալի պարտության: Նա վստահ է սակայն, որ մեր ժողովրդը կվերագտնի իր ասպետական ուժն ու վճռակամությունը, ոտքի կկանգնի եւ կշարունակի հայ ժողովրդի իրավունքների ի խնդիր ազգային-ազատագրական պայքարը:

Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Վերահաս վտանգների դեմ առնելու ճանապարհը համահայկական միասնությամբ ազգային դիմադրություն առաջացնելն է. Արմեն Ռուստամյան

ՀՀ Բյուրոյի նախագահ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանի ելույթ է ունեցել «Հայաստանին և Արցախին սպառնացող վտանգները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով կլոր սեղանի ժամանակ:

Տարածաշրջանային կայունության ու խաղաղության առերեսույթ միտված նորոյրյա գործընթացում Հայաստանը կանգնած է ճակատագրական երկընտրանքի առջև. այն է՝ խաղաղություն՝ շնորհիվ Հայաստանի ուժեղացման, թե ի հաշիվ Հայաստանի թուրքացման:

Հարավային Կովկասի տարածաշրջանում դերակատար երկրների շահերի բախման և բեռնացման որպես հետևանք՝ կատարվում է ազդեցության գոտիների նոր վերաբաշխում:

Ավանդաբար այսպիսի գործընթացում անմիջական մրցակցությունը ծավալվում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև, ինչը դրսևորվում է միաժամանակ թե նրանց ունեցած գրեթե նույն հավակնություններով նույն տարածքների նկատմամբ, թե իրավիճակային բնույթ ունեցող ընդհանուր հակառակորդների ի հայտ գալով:

Թե ինչպիսի տեսք կունենա մեզ համար տարածաշրջանի աշխարհաքաղաքական նոր քարտեզը, կախված է նրանից, թե մինչև որտեղ կհասնի Թուրքիայի ծրագրերի նեոսոմանական ռազմավարական խորությունը:

Սակայն իրականությունն այն է, որ սա մարտահրավեր է միայն Հայաստանին ուղղված, այլ Թուրքիան իր ռազմավարական շահերի գոտի է հռչակել շուրջ 70 պետություն, որտեղ բնակվում են թրքալեզու ժողովուրդներ: Իսկ այն երկրները, որտեղից կարող են բխել սպառնալիքներ նեոսոմանական ծրագրերին, թիրախավորված են որպես պանթուրքիզմի խոչընդոտներ: Ահա ռազմավարական այս մակարդակի վրա է, որ դրսևորված է Հայաստանի հետ այս կամ այն չափով աշխարհաքաղաքական շահերի և սպառնալիքների ընդհանրություն ունեցող երկրների շրջանակը: Այս շրջանակն, ի դեպ, տարածաշրջանում ներառելով անմիջական դերակատարներ Ռուսաստանին և Իրանին, տարածվում է դեպի արևելք՝ մինչև Գինաստան և Հնդկաստան, իսկ դեպի արևմուտք՝ մինչև միջերկրածովյան ավազան:

Եվ հենց այս երկրների ռազմավարական շահերից նաեւ չի բխում, որ Հայաստանը կորցնի իր աշխարհաքաղաքա-

կան նշանակությունը և պանթուրանական արքանի մեջ ընկնելով՝ հայտնվի վերջնականապես, այսպես կոչված՝ «աշխարհաքաղաքական պարկուճ»:

Այդ «պարկուճ» Հայաստանը հանող է աշխարհաքաղաքական «գծի» վրա պահողը այսօր Սյունիքն է:

Սա է Հայաստանի թուրքացման աշ-

պանթուրանական ծրագրերի անխափան իրագործման:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը աշխարհաքաղաքական այս վերադասավորումների բարդագույն ժամանակահատվածում կանգնած է վերստին թուրքացման սպառնալիքը չեզոքացնելու և մեր սերունդների անժա-



խարհաքաղաքական հետեւանքը, երբ աշխարհին այլևս ոչնչով հետաքրքիր չես, իսկ պետության նմանալ գոյությունը պայմանավորված է բացառապես Թուրքիայի բարեհաճությամբ:

Սա թույլ չտալն է նաեւ Սյունիքով ու Արցախով Հայաստանի՝ որպես աշխարհաքաղաքական գործոնի պահպանման և ամրապնդման ներկա սերնդի պատմական առաքելությունը:

Քանզի ակնհայտ է, որ նեոսոմանիզմը որպես ռազմավարություն որդեգրած Թուրքիան խաղաղության, տնտեսական կամ այլ ոլորտներում փոխգործակցության անվան տակ սովորաբար թաքցնում է իր քաղաքական էքսպանսիա իրականացնելու և տվյալ տարածքում լիարժեք վերահսկողություն հաստատելու բուն նպատակը: Օրինակները քիչ չեն, և հենց՝ մեր անմիջական հարեւանությամբ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ թուրքացումը իր տարաբնույթ դրսևորումներով թուրքական, այսպես կոչված՝ «փափուկ ուժի» մարտավարության էությունն է, որի նպատակն է՝ տարբեր ոլորտներում փոխգործակցության անվան տակ հասնել տվյալ երկրի՝ Թուրքիայից առավելագույն կախվածության և

մանցելի իրավունքները պահպանելու հրամայականի առջև:

Քանզի թուրքացման գնով ստացած խաղաղության լավագույն արդյունքը ազգային բովանդակությունից զուրկ, սեփական կենսական շահեր չունեցող և թուրքական բարեհաճությանը հանձնված պետության առերեսույթ գոյությունն է:

Այսինքն՝ հանուն խաղաղության թուրքացման վերջնարդյունքը անխուսափելիորեն հայոց անկախ պետականության փլուզումն է:

Հայկական անկախ պետականության փլուզմանն է հանգեցնելու նաեւ Արցախի հայաթափումը: Հայաստանի անկախությունը ձեռք է բերվել Արցախյան ազատամարտի պայմաններում, և հիմա, այս վերջին պատերազմից հետո դժվար չէ պատկերացնել, թե ինչ կմնար Հայաստանի անկախությունից, եթե չլիներ Արցախյան ազատամարտի մեր հաղթանակը: Այդ հաղթանակը Հայաստանի այս կառավարությունն այսօր վեր է ածել պարտության, և անմիջապես, որպես հետեւանք, ստացել է ինդիք, թե ինչպես պահպանել Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

Հետեւաբար, չտեսնել փոխկապակցվածությունը Արցախի հայկականության և Հայաստանի ինքնիշխանության՝ նշանակում է գնալ երկուսն էլ կորցնելու ճանապարհով:

Հայաստանի թուրքացումը և Արցախի հայաթափումը այս պատերազմից հնարավորինս արագ առավելագույնը ստանալու թուրք-արդրեջանական տանդեմի գլխավոր նպատակն է:

Ուստի Հայաստանին և Արցախին սպառնացող անմիջական վտանգը հենց դա արձանագրող հնարավոր ամբողջական կապիտուլիացիան է: Այս վտանգն ավելի իրական է դառնում գործող վարչախմբի մինչ օրս դրսևորած՝ ժողովրդի թիկունքում ժողովրդի ճակատագիրը որոշելու հակաօրինական գործելաոճի պայմաններում: Գաղտագողի, կատարված փաստի առաջ կանգնեցնելու միջոցով ժողովրդին կործանարար գիշումներ պարտադրելը այս վարչախմբի անխախտ ձեռագիրն է դարձել:

Այսպես եղավ, երբ պատերազմը շարունակելու կործանարար հետեւանքները թաքցվեց հաղթական պաթոս առաջացնելու միջոցով:

Այսպես կարող է լինել հիմա, երբ կենսական գիշումներ ենթադրող հերթական կապիտուլիացիոն գործընթացը խլացվի տարածաշրջանում խաղաղության նոր դարաշրջան բացելու վարչախմբի ամպագոռոգը և ոչ պակաս պաթետիկ կոչերով:

Ժողովուրդը չի կարող թմբիրի մեջ սպասել՝ մինչև ամեն ինչ իր թիկունքում ավարտին հասցվի, երբ անցած կլինեն անշրջելիության բոլոր հանգրվանները:

Իսկ որ արդեն ստեղծվում են անշրջելի վիճակներ, վկան սահմաններում տիրող իրավիճակն է:

Չորօրինակ գոյություն չունի սահմանազատման և սահմանագծման մասին որեւէ վերջնական համաձայնություն կողմերի միջև, բայց Ադրբեջանն արդեն մեր իսկ թողտվությամբ, դիրքեր գրավելով կանխորոշում է սահմանազատման հետագա ընթացքը:

Վերահաս այս վտանգների դեմ առնելու ճանապարհը համահայկական միասնությամբ ազգային դիմադրություն առաջացնելն է:

Դիմադրության պլատֆորմը պետք է ձեւավորել Հայաստանի թուրքացման և Արցախի հայաթափման սպառնալիքների ամբողջական գնահատման և դրանց հաղթահարման մարտավարական հստակ սկզբունքների մատնանշման հիման վրա:

## ՀՄԸՄ-ն ոգեկոչում է

Հոկտեմբերի 30-ին Բյուրականի բանակավայրում տեղի է ունեցել «Անմահ խիզախներ» հուշարձանի բացումը՝ նվիրված Արցախյան առաջին և երկրորդ պատերազմների նահատակներին: Նույն օրը, կեսօրից հետո Բյուրականի ՀՄԸՄ-ի բանակավայրն անվանակոչվեց՝ ի հիշատակ ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչության նախկին ատենապետ, վաստակաշատ ՀՄԸՄ-ական Գառնիկ Մկրտչյանի:

Հուշարձանի բացման և անվանակոչման հանդիսավոր արարողություններին ներկա էին ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատրյանը, ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամ Դավիթ Իշխանյանը, ՀՀ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ Բագրատ Եսայանը, «Կամավորական շարժում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, իրենց լիազուրկ նիստերը Երեւանում կատարող ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչության անդամներ, նույն նիստերին հրավիրված ՀՄԸՄ-ի



Մոսկվայի և Թիֆլիսի մասնաճյուղերի ատենապետներ, ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի վարչության ներկա և նախկին ան-

դամներ, սկաուտներ և նահատակների ծնողներ:

Հոկտեմբերի 31-ին ոգեկոչման ժամադրավայրը Եռաբլուրն էր: Եռաբլուրի մատուռում կատարվեց հոգեհանգստյան կարգ, ապա ներկաները ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատրյանի և ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչության ատենապետ Վաչե Նաճարյանի առաջնորդությամբ այցելեցին Անհայտ զինվորի հուշակոթող և ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքի անունից հարգանքի ու մեծարանքի ծաղկեպսակ տեղադրեցին:

Դրոշակակիր սկաուտների ուղեկցությամբ նրանք այցելեցին Արցախյան առաջին և երկրորդ պատերազմներում զոհված ՀՄԸՄ-ականների շիրիմներին, ծաղիկներ մատուցեցին նրանց անթառամ հիշատակին:

Շիրիմների այցելությունից հետո Եռաբլուրում հնչեցվեց ՀՄԸՄ-ի քայլերգ «Հառաջ Նահատակ»-ը:

## Նոր որակի պետություն ստեղծելով հնարավոր է դուրս գալ այս մղձավանջից

Ի՞նչ ունենք պատերազմից մեկ տարի անց, որո՞նք են պարտության պատճառները, որո՞նք են այսօրվա մեր հիմնական անելիքները: Այս հարցերի շուրջ «Ապառաժ»-ը զրուցել է Արցախի «Արդարություն» կուսակցության համանախագահ Կարո Կարոյանի հետ:

**- Պարոն Կարոյան, ըստ Ձեզ՝ 44-օրյա պատերազմից մեկ տարի անց կարո՞ղ ենք հստակ մատնանշել պարտության հիմնական պատճառները: Որո՞նք են դրանք:**

- Ցավոք սրտի, իմ դիտարկումներն այս հարցի շուրջ լինելու են գուտ վերլուծական բնույթի, քանզի կա մեծ ծավալի տեղեկատվություն, որին տիրապետում են միայն մի քանի անձինք, որոնք ներկայացնում են իշխանությունը և որոնք թաքցնում են այդ իրական տեղեկատվությունը, որը կարելի է հասկանալու համար է՛լ պատերազմի սկսման, է՛լ պատերազմին պատշաճ չարձագանքելու, է՛լ պատերազմը ժամանակին չկանգնեցնելու պատճառները: Սակայն, միանշանակ է, որ այս պատերազմի էլքը վճռված էր դեռևս մինչև սեպտեմբերի 27-ը, քանզի 2018 թվականին Հայաստանում իշխանության եկավ մի քաղաքական ուժ, որը հետևողականորեն քանդեց հայկական բանակը, առ ոչինչ դարձրեց Արցախյան հերոսապատումը:

2020 թվականին այս իշխանությանը միացավ նաև Արցախի և նորընտիր իշխանությունը, որը ստորակետի ճշտությամբ համաձայն էր նրանց վարած հակահայ քաղաքականությանը: Պատահական չէ, որ ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ ավարտից հետո, հենց հայաստանյան և արցախյան իշխանությունները շրջանաճառության մեջ դրեցին դավաճանության առկայության եզրույթը և սկսեցին ակտիվորեն տարածել: Արդյունքում մեղավոր էին բոլորը, բայց ոչ իրենք: Հիմա էլ մեծ թափով փորձ է արվում մեղավորությունը բարդել ժողովրդի կամ զինվորի վրա:

Սակայն պետք է փաստել, որ 44 օրյա պատերազմի նման խայտառակ է կործանարար էլքի է՛լ պատճառը, է՛լ մեղավորները միայն ու միայն Հայաստանի և Արցախի ներկայիս իշխանություններն են: Իմ կարծիքով, այս պետական դավաճանական վարքագիծը երկու իշխանությունների հիմնական դերակատարները՝ Նիկոլ Փաշինյանը և Արայիկ Չարուբեյանը, դրսևորեցին ոչ թե չիմացության կամ սխալի պատճառով, այլ հատուկ, դրսից կազմակերպված ուժերի թելադրանքով՝ իրենց համաձայնության պարագայում:

**- 2020թ. հոկտեմբերի կեսերից հետո կարծես թե արդեն պարզ էր պատերազմի էլքը: Դուք այդ օրերին արդո՞ք կանխատեսում էիք պատերազմի այսպիսի վերջաբան:**

- Այն, որ պատերազմը սկսվել էր ոչ միայն մեր հայրենիքը օկուպացնելու նպատակով, այլև հայկական բանակը հիմքից քանդելու և հայ ազգի մեջ բնաջնջվելու վախ ներշնչելու համար, և այս գործընթացին օգնում էին ներսից, արդեն իսկ պարզ էր հենց առաջին օրերից: Հայաստանյան իրականության մեջ տարածելով «հաղթելու ենք» հեշտեզը, իսկ բանակում անկազմակերպվածության միջոցով պակաս տարածելով՝ հենց ասածիս հավաստումն էր: Ցավոք, տեղում ոչ ոք չկարողացավ կանգնեցնել այս ազգազուլ էլ կործանարար գործընթացը, անկախ նրանից՝ կանխատեսում էին, թե ոչ:

**- Պատերազմից հետո Արցախում մեծածավալ շինարարական, վերանորոգման աշխատանքներ են ընթանում: Ձեռնարկվող միջոցառումները դուք համարո՞ւք եք համարում տիրող իրավիճակին:**

- Վերջին պատերազմի վերքերը ոչ միայն դեռ չեն սպիացել, այլև չեն սպիանալու չափազանց երկար ժամանակ, եթե կարող են սպիանալ երբեք: Ցավոք, 2020 թվականի սեպտեմբերից հետո տեղի ունեցած ողբերգալի և կործանարար իրադարձություններից հետո առ այսօր անցել է ավելի քան մեկ տարի և ոչ մի եական փոփոխություն չկա, էլ չենք խոսում առաջընթացի մասին: Սոցիալական լարվածության աճ, վտանգի օրեցօր ուժեղացող գագոցություն և արտագաղթի մեծ ծավալներ՝ ահա այն, ինչ ունենք այս ամիսների ընթացքում կառավարության գործունեության արդյունքում:

Տարերային սոցիալական ծրագրեր փող բաժանելու տեսքով, ոչ հասցեական օգնություններ, որտեղ շահառու ծանոթ բարեկամ-խնամի անձն է, այլ ոչ թե գնահատման միջոցով հայտնաբերված կարիք ունեցող ընտանիքը: Անհասկանալի շինարարական աշխատանքներ՝ անօթեաներին տուն հատկացնելու քողի տակ, ասֆալտապատում, սալիկապատում, բնակավայրե-



րից դուրս ճանապարհների լուսավորում, որը նույնիսկ պատերազմով չանցած երկրները իրենց երբեմն թույլ չեն տալիս: Իսկ վերջերս նախարարություններում չարաշահումների և թալանի մասին հայտարարեցին իրավապահ մարմինները: Սա է ձեռնարկվող միջոցառումների գնահատականը:

Այս իշխանություններն ունակ չեղան կանխելու երկրում ընկճախտի և շփոթվածության մթնոլորտի ձևավորումը, չկարողացան պայմաններ ստեղծել, որպեսզի բոլորը կարողանան աշխատել, այլ ոչ թե սպասեն հերթական 68000 դրամին, հատկապես չկարողացան կամ չուզեցին ապահովել պետական համակարգի կարգապահ և համակարգված աշխատանքը: Մենք գտնում ենք, որ հնարավոր է նոր որակի պետություն ստեղծելով դուրս գալ այս մղձավանջից՝ բացառիկ հայրենասիրությամբ, հմուտ կառավարմամբ և ռեսուրսների լիարժեք օգտագործմամբ:

**- Ինչպե՞ս եք բացատրում ՀՀ իշխանությունների հակասական հայտարարություններն ու անորոշ քաղաքական պահվածքն Արցախի նկատմամբ:**

- Սուսկ առաջին հայացքից է թվում, թե իշխանությունները հակասական հայտարարություններով են հանդես գալիս և ունեն անորոշ քաղաքական պահվածք Արցախի նկատմամբ: Իրականում այս իշխանությունները փակել են Արցախի հարցը և այժմ ամեն կերպ

ծգոում են ձեռքագառնել Արցախից: «Սերգոն որոշել է այլևս վատ չապրել Արցախի պատճառով»:

Հայաստանյան բարձրագույն իշխանությունները դադարել են այցելել Արցախի Հանրապետություն, Հայաստանում պետական միջոցառումների ժամանակ չկա Արցախի պետական պատվիրակություն, գրեթե քար լուրջություն Արցախում սահմանային միջադեպերի վերաբերյալ, Արցախում գերեզարկվածներին օգնականականում չի դիմավորում որեւէ հայաստանյան կամ Արցախյան պետական պաշտոնյա, և այլն: Եվ, վերջապես, ինչ կարելի է սպասել մի մարդուց, որը իր գործունեությամբ երկիրը բերեց հասցրեց մի իրավիճակի, որ ստորագրեց մի խայտառակ փաստաթուղթ, որը պարզապես աղետ դարձավ Արցախի և Հայաստանի համար: Փաստաթուղթ, որը կոտրեց մեր երկու պետությունների ողնաշարերը, գրոյացրեց մեր ժողովրդի 30 տարվա սիրանքներն ու ձեռքբերումները:

**- ՀՀ իշխանությունների կողմից վարվող ապազգային քաղաքականության պատճառով ականատես ենք լինում թշնամու կողմից սահմանային խախտումների և հայկական տարածքների զավթմանը: Մինչև ե՞րբ կարելի է հանդուրժել այս իրավիճակը:**

- Նիկոլ Փաշինյանն առաջնորդվում է «ամեն ինչ՝ հանուն խաղաղության» սկզբունքով, այդ թվում՝ պատրաստ լինելով ոտնահարել Հայաստանի ու հայ ժողովրդի արժանապատվությունը: Խաղաղությունը, այո, արժեք է, որին պետք է ձգտի ցանկացած ողջամիտ հասարակություն ու պետություն: Մյուս կողմից, խաղաղությունը չի կարող լինել գերնպատակ ու ինքնակատար, եթե դրան հասնելու ճանապարհները ոտնահարում են ազգային ու պետական արժանապատվությունը, անկախությունը ու ինքնիշխանությունը: Եթե մինչ 2018 թվականը Արցախը հայաստանյան իշխանությունների համար կարմիր գիծ էր, ապա այսօր հայաստանյան իշխանությունները չունեն իրենց կարմիր գծերը, ուստի ամեն ինչ հնարավոր է, և ամեն հանդուրժման օր մեզ ավելի է մոտեցնում անդամալի կորստին:

**- Որպես ընդդիմադիր կուսակցության ղեկավար, որո՞նք եք համարում Արցախի ներքին քաղաքական հիմնական խնդիրները:**

- Կարծում եմ, այսօր չկա առանձին Արցախի խնդիր, այլ սեղանին դրված է հայ ազգի խնդիրը, որին իբր թե լուծում են ուզում տալ պարտված իշխանությունները: Այն, որ Արցախի նախագահը ունակ չէ Արցախի Հանրապետության առջեւ ծառայած խնդիրները լուծել, մեր քաղաքական ուժը այդ մասին հայտարարել է դեռևս մինչև պատերազմը, երբ ահագանգում էինք, որ մեզ սպասվող պատերազմում նման իշխանությամբ մենք հաջողության չենք հասնելու: Պատերազմից հետո մենք առաջիններից էինք, որ պահանջել ենք Արայիկ Չարուբեյանի հրաժարականը, և այդ պահանջը այսօր էլ մեր օրակարգում է: Երկիրը այս վիճակին հասցրած քաղաքական իշխանությունը պետք է օր առաջ հեռացվի, որը, սակայն, դեռևս չի հաջողվում: Կարծում եմ, որ այս դիտանկյունից պետք է նայել հետագա քաղաքական դաշտի զարգացման հեռանկարներն ուրվագծելիս:

Հեռացումից հետո նոր քաղաքական

ուժերը պետք է մշակեն հստակ ճանապարհային քարտեզ երկիրը այս վիճակից հանելու համար: Այսօրվա հրամայականն է՝ մշակել ազգային անվտանգության քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ՝ ուղեկցելու համար, թե յուրաքանչյուր ոլորտում ինչպիսի միասնական պետական քաղաքականություն պետք է իրականացվի: Ցավոք, այս իշխանությունները ունակ չեն նման գործընթացներ իրականացնել, և ամեն ինչ անելու են փակելու նմանատիպ աշխատանք կատարելու ունակություն ունեցողների ճանապարհը:

**- Զաղաքական գործիչների կողմից Արցախի կարելորագույն խնդիրներից են համարվում անվտանգության և կարգավիճակի հարցերը: Որո՞նք են Ձեր տեսակետներն այս կարելորագույն հարցերի վերաբերյալ:**

- Անվտանգության բաղադրիչը միշտ եղել է Արցախի Հանրապետության գոյության իրավունքի կարելորագույն բաղադրիչը, որի մասին բազմիցս խոսել է մեր կուսակցությունը: Պատերազմից հետո այն դարձել է մեզ համար գոյաբանական հարց, քանզի Արցախում բնակչությանը գումար բաժանելով չես կարող ապագայի նկատմամբ հույս ներշնչել: Ամենակարճ ժամկետում անհրաժեշտ է մշակել և կիրառության մեջ դնել Արցախի Հանրապետության բանակի վերակենդանացման, վերագինման և կատարելագործման ծրագիր՝ լրջագույն աշխատելով դրա համար տնտեսական հիմքեր ու ֆինանսական աղբյուրներ ստեղծելու ուղղությամբ: Այդ բանակի կառուցվածքը, զինատեսակները են ընդհանրապես բնույթը պետք է համահունչ լինեն նոր ստեղծված իրավիճակին և մարտահրավերներին: Այն պետք է տարբեր լինի դասական բանակից, վերածի շատ ավելի շարժունակ, դիպուկ և նպատակամետ բանակի:

Պետք է սկսել երկրի պաշտպանականության և զինված ուժերի կառուցման, բանակի նյութատեխնիկական ապահովման նոր հայեցակարգի մշակում՝ հաշվի առնելով հայ-արդիբեռնական պետական սահմանի նոր իրողություններն ու պարամետրերը: Պետք է նոր իրականության պայմաններում Ռուսաստանի հետ հարաբերությունների նոր կարգավիճակներ փնտրել: Պետք է ակտիվացնել աշխատելով Ռուսաստանի հետ՝ սահմանելու համար նոր կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և համագործակցության նախագծեր անվտանգության, առողջապահության, էներգետիկայի, գյուղատնտեսության, զբոսաշրջության և այլ ոլորտներում:

Արցախի Հանրապետությունը կայացած պետություն էր մինչ պատերազմը, և շարունակում է կայացած մնալ պատերազմից հետո: Ռազմական գործողություններով հնարավոր չէ լուծել կարգավիճակի հարցը, որքան էլ որ Ալիևը հոխորտա, որ Լեռնային Ղարաբաղի հարց այլևս չկա: Սա էս մեկ անգամ փաստում է, որ դիվանագիտական ճակատում ահռելի գործ ունենք անելու, և մեծ ջանքեր պետք է գործադրենք: Սակայն պետք է հասկանանք, որ պարտված դեպքերով չի կարող արդյունավետ բանակցություններ կատարել: Միայն նոր իշխանությունները կկարողանան իրենց դիվանագիտական ողջ ներուժն ու Սփյուռքի կարողություններն օգտագործել Արցախի անկախության միջազգային ճանաչման համար: Այս գործընթացին պետք է նոր ուժով միանա նաև Սփյուռքը: «Ես ճանաչում եմ Արցախը» կարգախոսով ակցիաները պետք է հզոր շարժման սկիզբ դառնան աշխարհի տարբեր երկրներում:

Տաթևիկ ԱՐԱՋՍՆՅԱՆ

# «Ոսկե արծիվ» շքանշանակիր Ալեն Մարգարյան

«Պատերազմն աշխարհի ամենաբարձրաճաշակ սիրահարն է. այն միշտ տանում է լավագույններին»,-ասել էր «Ոսկե արծիվ» շքանշանակիր, «Արցախի հերոս» Ալեն Մարգարյանն ու ինքն էլ գոհ դարձել 44-օրյա պատերազմ կոչվող արհավիրքին:

Ալեն Լեւոնի Մարգարյանը ծնվել է 1999թ. փետրվարի 11-ին քաղաք Երեւանում: 2005-ից հաճախել է Դ.Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոց, որն ավարտել է գերազանցությամբ: 2013-ից ուսումը շարունակել է Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցում:

Ալենի մայրը՝ Նազելի Տերտրյանը, մեզ հետ զրույցում նշեց, որ Ալենը դպրոցում սովորել է գերազանց: Օնոդակյան ժողովներն ուղեկցվում էին Ալենի հասցեին հնչող հիացական զգացումներով: «Ուսուցիչները տետրը բացում էր շարքերով անցկացնում էին, ասելով՝ աղջիկներ, տեսե՛ք, տղայի տետր է, օրինակ վերցրե՛ք, մարզարիտներ է շարում»,- հիշում է տիկին Նազելին:

Ընթերցանության եւ գրքերի մեծ սիրահար էր Ալենը: Ստեղծել էր իր անձնական գրադարանը, սիրում էր գրքեր նվիրել եւ ստանալ: Սիրելիին՝ Շողիկ Դեբիրկյանին անառիթ նվիրած հերթական գրքերից մեկի վրա Ալենը գրել էր. «Հուսով եմ՝ մի օր բոլորը կհասնեն մտքի այն հայտնությանը, որ գիրք նվեր ստանալուց մեզ պես ուրախանալու»: Սիրելի ստեղծագործությունը Լեւ Տոլստոյի «Աննա Կարենինա»-ն էր: Շատ էր սիրում նաեւ հեքիաթներ, որոնք երեխաների համար կրթող ու դաստիարակող նշանակություն ունեն: Ինքն էլ ուներ հեքիաթների սյուժետներ:

Ընթերցանության հանդեպ սերը, ըստ տիկին Նազելիի, Ալենի մոտ ի հայտ է եկել պատանեկան տարիքից: «Մինչ այդ ես ինքս ինձ հարց էի տալիս, թե ինչպե՞ս կարող եմ այդքան լավ սովորող երեխան հեռու լինել գրքերից, սակայն ես սխալվում էի: 12-13 տարեկանից արդեն սկսեց կարդալ արկածային գրականություն: Առաջին գիրքը «Գանձերի կղզի»-ն էր, որից էլ սկսեց իր սերը գրքերի հանդեպ»,- պատմում է տիկին Նազելին:

Ալենը զարմանահրաշ երեխա էր: Տիկին Նազելին նշում է, որ չի հիշում Ալենի թոթովանքը, որովհետեւ նրան թվում էր, թե մեծ, լուրջ, խոհուն մարդու հետ գործ ունի: «5-6 տարեկան հասակում այնպիսի խորը փիլիսոփայական մտքեր էր արտահայտում, որ ես ապշում էի նման տարիքի երեխայի այդպիսի ինտելեկտով: Իրեն հետաքրքրում էին քաղաքում տեղակայված շենքերը, արձաններն ու կողոզները, եւ մշտապես հարցեր էր տալիս դրանց մասին»,- ասում է նա:

Նա մշտապես տարբերվում էր իր հասակակիցներից թե՛ հազուկապով, թե՛ աշխարհայացքով, թե՛ ճաշակով եւ թե՛ հետաքրքրությունների շրջանակով: Հաստատակամ, վճռական, նպատակասույաց ու իր որոշումներով ինքնուրույն այս տղան շատ հաճախ էր օրինակ դառնում իր հասակակիցների համար: «Ալենը կարող էր վերնաշապիկի օձիքը կոճկել մինչեւ վերջին կոճակը եւ հասակակիցների զարմացական հայացքներից անկախ քայլել՝ գլուխը բարձր: Հետաքրքրական այն էր, որ որոշ ժամանակ հետո նկատվում էին նույն վարքագիծը դրսևորող այլ տղաներ»,- ասում է տիկին Նազելին: Նրա խոսքով՝ Ալենը չէր վախենում տարբերվելուց, անգամ 12-րդ դասարանում կանոնավոր լրացնում էր իր օրագիրը, որոնք լցվում էին բարձր գնահատականներով:

Ալենը յուրահատուկ վերաբերմունք էր տածում ֆիլմարվեստի նկատմամբ: Ուսման հետ զուգահեռ հաճախել է նաեւ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն: Մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես հայկական արվեստին աստարեյուն թե՛ կինոյի, թե՛ արվեստի թե՛ գրականության ասպարեզներում: Ֆիլմարվեստի հանդեպ մեծ հետաքրքրությունն ու սովորելու ձգտումը նրան դարձրին մեդիա ոլորտի վառ ուսանողներինց եւ TumoNews (Teen) ստարտափի համահիմնադիրներինց մեկը: 16 տարեկանից ընդգրկվել էր «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի ժյուրիի կազմում:

Ալենը բավականին աշխույժ ու նախաձեռնող պատանի էր: Սիրում էր ընկերական միջավայրում լինել, եւ իր տեսակով շատ շատերին համախմբում էր իր շուրջը: Կազմակերպում էր կինոդարձումներ, կինոթատրոններ: «Ձեռք էր բերում բավականին շատ ֆիլմեր ու մուլտֆիլմեր եւ, իր անձնական արխիվն օգտագործելով, կազմակերպում էր այդ դիտումները, անգամ տումսեր էր պատրաստում, նախաձեռնում դրանց վաճառքը»,- պատմում է մայրը:

Ալենը մեծ երազանք ուներ՝ փոխել աշխարհն ու այն ավելի լավ դարձնել: Ինչպես ինքն էր նկատել՝ «Կյանքի իմաստը վաղվա օրվա ավելի լավ լինելու հավատի մեջ է»: Հենց այս հավատով էլ 2016թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսորա բաժին: Տարբեր աշխատանքների ընթացքում ստանձնել է չորս փաստագրական ֆիլմի ռեժիսորի դեր: Դրանցից երկուսը՝ «Greens» եւ «Taraz» ֆիլմերը, նկարահանվել են Միխայիլյան ինստիտուտի համար՝ հայկական մշակույթն աշխարհին ներկայացնելու նպատակով:

Համալսարանն ավարտելով կարմիր դիպլոմով, աշխարհը փոխելու եւ այն ավելի լավ դարձնելու իր մեծ նպատակին հասնելու համար հաջորդ քայլը պետք է լի-

ներ արտասահմանում ուսումը շարունակել: Փայլուն գիտելիքներով եւ իր յուրովի աշխարհընկալմամբ, 4 լեզուների տիրապետող Ալենը 2020թ. ընդունվում է Բոստոնի համալսարան՝ «Սոցիալական աշխատանք» եւ «Կրթության կառավարում» կրկակի մագիստրոսական ծրագրով՝ հիացնելով Բոստոնի համալսարանի ղեկավարությանը:

«Աշխարհում չկան հանցագործ երեխաներ, ամեն ինչ գալիս է խեղաթյուրված մանկությունից»,- ասում էր իր եւությամբ ու առաքելությամբ մանկավարժ Ալենը ու հատկապես երագում աշխատել ուղղիչ աշխատանքային հիմնարկներում դատապարտված անչափահասների հետ, որպեսզի փոխի նրանց ու դեպի լավ ուղղորդի: Սիրում էր կրթել, պլանավորում էր վերադառնալ ու Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում գրականություն, արվեստ ու լեզուներ դասավանդել: Նպատակ ուներ բարեփոխել Հայաստանի կրթական համակարգը, եւ միշտ ասում էր. «Լավ կրթությունը պիտի հասանելի լինի բոլորին»:

Ընդունվեց, սակայն Բոստոն մեկնել չէր շտապում. պարտք ուներ հայրենիքի եւ իր ժողովրդի հանդեպ, պետք է կատարեր: Բոլորը չէ, որ կարող են նման համալսարան ընդունվել, ուստի հարազատները փորձում էին համոզել, որպեսզի շնանք ձեռքից բաց չթողնի եւ իր ստացած գիտելիքները ծառայեցնի հայրենիքին, սակայն Ալենն անսասան էր իր որոշման մեջ. Նախ պետք էր ծառայել: Ասում էր՝ «Մի անգամ ընդունվել եմ, էլի



կընդունվեմ», եւ համալսարանի ղեկավարությանը հղած իր նամակի մեջ, գրում է. «Ես անսահման երախտապարտ եմ հազարավոր դիմորդների միջից նախապատվություն ինձ տալու համար, շնորհակալ եմ այդ մեծ պատվին ինձ արժանացնելու համար, սակայն հայրենիքս ու պետությանս սահմաններն իմ պաշտպանության կարիքն ունեն, եւ ես պարտավոր եմ լինել ազգիս կողքին, ուստի ներողություն եմ խնդրում, բայց չեմ կարող գալ: Ալենի այս նամակին հետեւել է Բոստոնի համալսարանի ղեկավարության զարմացած ու ապշած պատասխանը. «Մենք պատաստ ենք քո տեղը 2 տարի պահպանել, պատրաստ ենք նույնիսկ վերանայել քո կրթաթոշակը, միայն թե քո տեսակի եզակի երիտասարդը դառնա մեր ընտանիքի անդամը»:

Մոր խոսքով՝ Ալենն ուներ հնարավորություն ճակատը պարզ եւ առանց գարտուղի ճանապարհների խուսափել ծառայել հայոց բանակում, սակայն նա շարքային չէր եւ նրա որոշումն էլ չէր կարող շարքային լինել: Հաստատվեց օգուցվելն այս հնարավորությունից՝ հանգիստ խոնով իրենց բարեկեցիկ ապագան կառուցելով ԱՄՆ-ում, սակայն Ալենն ընտրեց Հայրենիքին իր պարտքը տալու ճանապարհը:

Կեռ ու ազնիվ Ալենը շատ պատվախնդիր ու հայրենասեր երիտասարդ էր, եւ գտնում էր, որ յուրաքանչյուր տղա պարտք ունի հայրենիքի առջեւ եւ ամենից առաջ այդ պարտքը պետք է հանձնի, որից հետո մտածի իր գունդը ապագան կառուցելու մասին:

Չնայած Ալենը արյան ծառանգական հիվանդություն ուներ՝ ժլիբերի համախտանիշ, այնուամենայնիվ նա բժիշկներից պահանջել էր իրեն անապայման զորակոչել բանակ եւ տարօրինակ անհանգստությամբ սպասում էր ծանուցման թերթիկին: Վստահ էր, որ Արցախում պետք է ծառայի, միայն չգիտեր՝ կոնկրետ որ զորամասում:

Նախքան ծառայության մեկնելը Ալենն իրենց տանը ընկերների համար ընթրիք էր կազմակերպել, որի ավարտին ընկերները բարեմաղթանքներ էին թողել պատրիկ կախված գրատախտակի վրա, սակայն գորակոչի նախորդող օրը Ալենն ամբողջությամբ մաքրել էր դրանք եւ գրատախտակին թողել իրեն հետաքրքրող ամենամեծ հարցը՝ թե որն է յուրաքանչյուրիս՝ աշխարհը փոխելու ծրագիրը:

Ահա վերջապես եկավ երկար սպասված ծանուցագիրը, եւ 2020թ. օգոստոսի 12-ին գինվորական տեղամասում Ալենին փհճակվեց ծառայել Արցախի Մատաղիտում:

Տիկին Նազելիի մայրական սիրտն ընդվզում էր, ամբողջ հոգեւոր աշխարհը խառնվել էր իրար, որովհետեւ քաջ գիտակցում էր, որ գործ ունեն նեւթ թշնամու հետ,

որ առօրյայից տարբերվող նոր ու դժվարին միջավայրում է հայտնվելու Ալենը: Նա կարծում էր, որ Ալենը պետք է հանդես գար համաշխարհային ասպարեզներում եւ իր անունով փառավորել Հայաստանը, սակայն նրա առջեւ Ալենն էր՝ իր որոշումներում վճռական ու խիզախ, ուստի տիկին Նազելին ստիպված եղավ զսպել իր զգացումներն ու համակերպվել որդու որոշման հետ:

Ծառայության մեկ ու կես ամիսների ընթացքում Ալենը հասցրել էր գերել բոլորի սրտերը՝ շարքայինից մինչեւ հրամանատար, որովհետեւ ըստ նրանց խոսքերի՝ Ալենի գալով վաշտը կարծես լուսավորվեց: Բազմակողմանի զարգացած ու կրթված նորակոչից ծառայության ընթացքում էլ դրսևորեց հայ գինվորին վայել կարգապահություն եւ հանդուրժողականություն, գուսպ ու հպարտ կեցվածք:

«Ծառայության ընթացքում երբեք չի տրտնջացել, չի բողոքել: Շատ լավ գիտակցում էր, որ բանակային կյանքի դժվարություններն անխուսափելի են, սակայն մնում էր անսասան ու աներբ, միշտ ասում էր՝ «դե բանակ է, մամ քան, հո հյուրանոց չի»՝ այդպիսով արդարացնելով բոլոր դժվարությունները»,- ասում է տիկին Նազելին:

Ալենը շատ արագ հարմարվեց բանակային կարգուկանոնին ու պահանջներին: Շուտով տեղափոխվեց կապի վաշտ, որտեղ պետք է շարունակեր ծառայությունը՝ որպես ապագա կապավոր:

Չարաբաստիկ պատահականությամբ սեպտեմբերի 26-ին Ալենի ընտանիքը Արցախում էր, եւ նախաձեռնեց ամերիկացի արտերկրյան Ալենին թույլատրեցին հանդիպել ընտանիքին: Ցավոք սրտի, սա Ալենի եւ իր ընտանիքի վերջին հանդիպումը պիտի լիներ, քանի որ հաջորդ առավոտը պատերազմի գույժով բացվեց: Ալենը ճանապարհ ելնուանից, իսկ ինքը մնաց Արցախում. մնաց գիտակցված, մնաց վճռական իր որոշման մեջ: Մեկուկես ամսվա ծառայող, դեռեւս նորակոչի Ալենը չէր կարող անմասն մնալ իր ժողովրդի դեմ սանձազերծված պատերազմից: 4 օր շարունակ Ալենը արհավիրքի մեջ էր՝ լինելով Թալիշի ու Մատաղիսի անվտանգություն, ոչ մի վայրկյան մտքով չանցկացրեց թողնել խրամատն ու զինակից ընկերներին եւ հնարավոր տարբերակներով հայտնվել թիկունքում՝ փրկելով սեփական կյանքը: «Եվ նույնիսկ իմ պահանջին, որ միզուցե փորձենք առողջական խնդիրները լուծել՝ հիվանդանոցում գտնվելով, ես ստացա շատ կտորակ պատասխան. «Չէ, ու չիսմարձակվեց հաջորդ անգամ ինձ դասալիք դարձնել»,- հուզվելով, բայց եւ հպարտության մեծ զգացումով պատմում է տիկին Նազելին:

Նամակների սիրահար Ալենի՝ մորն ուղղված այդ կտորակ նամակը վերջինը դարձավ նրա համար: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 30-ին Ալենը մարտիրոսվեց: Ստացել էին շատ բարձր առաջադրանք. առաջնագծում զինամթերք ու սնունդ էր հարկավոր: Առաջադրանքը կատարելուց ոմանք հրաժարվեցին, սակայն ոչ Ալենն ու իր ընկերները: Մեծ երագողն ու անվախ զինվորը, հավատարիմ մնալով իր տեսակին, անմիջապես հանձն առավ տեղ հասցնել ինչ անհրաժեշտ էր, սակայն չհասցրեց զինակիցների մոտ հասնել՝ ճանապարհին անմահանալով անօդաչուի հարվածից:

Ալեն Լեւոնի Մարգարյանին ցուցաբերած քաջության ու անձնական արիության համար հետմահու շնորհվել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչում:

Ալենը միացավ անմահների գնդին եւ, ինչպես ինքն էր ընկերներից մեկին ասել, մնաց կապույտ երկնքում: Իսկ աշխարհը զրկվեց Ալենից, իր լուսավոր տեսակից: Հեռացավ լույս պահող ու միացավ տիեզերքի լույսերին, սեր լինելով՝ մահ տեսավ, գարուն կյանքին վիճակվեց վաղ շիրիմ, սակայն իր մահով ծնունդ տվեց նոր Ալենների, որոնք ծնվում են աշխարհի բոլոր ծայրերում եւ անվանակոչվում ի պատիվ հերոսի: Ալենն իր գործով ապացուցեց, որ բարձրագույն ու կատարյալ արժեքների իրական կրողն էր: Ալենն այսօր էլ կրթում է եւ, փառոս դառնալով, իր լույսով ուղղորդում էրիտասարդներին դեպի ճշմարիտ ուղի, որն անցնում է սիրո ու հանդուրժողականության, գրականության ու արվեստի ճանապարհներով՝ ի կատարումն նրա համամարդկային ցանկություններին:

Տիկին Նազելին սրտի խոր կսկիծով է արձանագրում, որ պատերազմի ավարտը շատ ցավոտ էր: «Տղաներն անձնուրաց էին, տղաները հերոս էին, առյուծասիրտ էին եւ գիտակցաբար կռվում էին հանուն հայրենիքի: Իրենց հաղթեցին՝ փառավորվելով հայոց պատմության հերոսական էջերում, իսկ մենք պարտվեցինք դավաճանության, ոչ պրոֆեսիոնալ մտեցման եւ անկազմակերպվածության պատճառով»,- ասում է նա: Նրա համար Ալենի կորուստը ցավ եւ հպարտության զգացողություն է առաջացրել, սակայն միաժամանակ պարտավորեցրել՝ կրել հերոսի մոր կոչումը, քանի որ օրինակ պետք է ծառայի հազարավոր մայրերի համար: «Պարտավորեցնող է լինել բարձունքում, լինել որդու հարիիր»,- նշում է նա:

Հերոսի մայրը կոչ է անում հայ մայրերին Ալեններ ծնել ու դաստիարակել, որովհետեւ նրանցից է կախված լինելու մեր հայրենիքի լուսավոր ապագան: Նրանք են, որ պետք է կերտեն Ալենի երագած աշխարհը եւ վաղվա օրը դարձնեն ավելի լավ, որի հավատով էլ Ալենում էր բոլորիս Ալենը:

Կահազն ԽԱՉՏՐՅԱՆ

# Քանի դեռ պարտված չես, քանի դեռ պայքարը չի մեռել քո մեջ, քանի դեռ ուժ ունես, դու կարող ես հաղթել

Դաշնակցության «Կամավորական շարժում» ԶԿ գումարտակի անդամ, բժշկուհի Գայանե Սահակովան 2021թ. սեպտեմբերի 27-ին առավոտյան հիվանդանոցում հերթապահությունից հետո համայն ավարտել ու պատրաստվում էր գնալ 2-րդ աշխատատեղը, երբ ֆեյսբուքում կարդաց սկսված պատերազմի մասին ել տեսավ՝ ինչպես են բոլորը կամավորագրվում հայրենիքի պաշտպանությանը:

«Դուրս գալով հիվանդանոցից՝ միանգամից գանգացի իմ դաշնակցական ընկերներին՝ հասկանալու համար՝ ինչ է կատարվում, եւ նրանք նույնպես ասացին, որ պատերազմ է սկսվել, ու մեր գումարտակը՝ Դաշնակցության կամավորական գումարտակը, հենց այսօր մեկնում է առաջնագիծ», - ասում է Գայանեն:

Ամբողջ ճանապարհին շատ լարված ու անհանգիստ էր Գայանեն: Չանգել ու խնդրել էր կուլեգաներին, որ իրեն փոխարինեն որոշ ժամանակով: Որոշված էր՝ մեկնում է ռազմաճակատ:

«Բոլորս մտածում էինք, որ կրկին 4-5 օր կտեւի, սակայն նույնիսկ եթե մեկ օր տեւեր, բոլորս պետք է գնալինք: Արդեն ժամը 12-ին հայտնի դարձավ, որ մեր գումարտակը հավաք է կազմակերպում Արամ Մանուկյանի արձանի մոտ: Ինձ փոխարինեցին եւ գնացի այդ հավաքին», - նշում է նա:

Դաշնակցության կամավորական ջոկատը սպասում էր ՊՆ-ի հրամանին՝ շարժվելու համար: Այդ օրը նաեւ շտապ օգնության խմբերն էին կամավորների կարիք զգում՝ վիրավոր զինվորներին տեղափոխելու համար:

«Ես դիմեցի մեր հրամանատարությանը, ասացի՝ եթե այսօր չենք գնալու, ես միանամ շտապ օգնության խմբերին, ինչին պատասխանեցին, որ սպասեմ՝ մինչեւ ՊՆ-ից վերջնական պատասխան ստանան», - ասում է Գայանեն:

Երիտասարդ բժշկուհին կամավորագրվեց նաեւ Առողջապահության նախարարությունում, որպեսզի ՊՆ հրամանին ուշացման դեպքում շտապ օգնության մեքենաներով մեկնի Արցախ, սակայն չհասցրեց. հրամանը չուշացավ: Դաշնակցության գումարտակը մեկնում է ռազմադաշտ:

«Արդեն ժամը 4-ին բժիշկ Նորիկի հետ գնացինք անհրաժեշտ դեղորայք գնելու, իսկ երեկոյան ժամը 9-ին մենք գնեք ստացանք եւ լուսաբացի ճանապարհվեցինք դեպի Արցախ», - պատմում է Գայանեն: Ստեփանակերտում գումարտակը ստացավ իր առաջադրանքը. պետք էր օր առաջ հասնել Մատաղիս:

Գայանեն դժվարությամբ է զգացողություններն արտահայտում բառերով: Վստահ է՝ ընթերցողն էլ չի հասկանա այն, ինչ նրանք էին զգում այդ պահին:

«Դա միեւնույն ժամանակ հպարտության զգացում է, որ գնում ես քո հայրենիքը պաշտպանելու կամ քո հայրենիքի համար մի օգնական գործ անելու, ե՛ւ վախ է, ե՛ւ տագնապ ու գիտակցում, որ քո եւ քո ընկերների հետ ամեն վարկյան կարող է պատահել անդառնալիս, հուզական է, անորոշություն՝ ինչ կլինի, ինչքան կտեւի, կդիմակայե՞նք արդյոք», - նշում է նա:

Նրա խոսքով՝ կար գիտակցում, որ իրենք այն հայրենիքի պաշտպանության գործին են մասնակցում, որի համար դա ժամանակին արել են թաթուղը, Կարոտը, Բեկորը եւ մյուսները:

«Երբ դու այդ ամենի մի մասն ես դառնում, անհնար է, որ այդ հպարտության զգացումն ու կարեւորությունը չզգաս»՝ միեւնույն ժամանակ հասկանալով, որ պատերազմ է, եւ ամեն վայրկյան կյանքը վտանգված է: Սրան զուգահեռ անընդհատ լսում են լավ ու վատ լուրեր, որ, օրինակ՝ Թալիշն ընկավ, կամ՝ շատ են օդից հարվածները, մտնում են աշխույժ քաղաք Ստեփանակերտ ու տեսնում ամայացած, եւ թախիծն ու տխրությունը պատում են քեզ», - ասում է Գայանեն:

Ըստ նրա՝ ոչ մի զինվոր մարտադաշտ մեկնելիս չի մտածում պարտության մասին, այլ գնում է հաղթելու հավատով: Հավատում է, որ մինչեւ վերջին կաթիլ արյունը պետք է կռվի, մինչեւ որ հաղթի:

«Դու չես գնում մեռնելու, դու գնում ես կռվելու ու հաղթելու: Մենք նույնպես հավատում էինք հաղթանակին, սակայն արդեն հոկտեմբերի 2-ից հետո, երբ մենք Լահիսնջում էինք Մատաղիսից, մեզ համար պարզ էր, թե ինչ է դա նշանակում», - սրտի խոր կակնոժով ասում է բժշկուհին:

Քարտեզների ամենօրյա ուսումնասիրություններից նրանք պարզ էր, որ պարտվում ենք՝ անկախ իշխանական քարոզչամեքենայի հայտարարություններից, անկախ հաղթելու ենք, հաղթում ենք կարգախոսներից: Թշնամին օր օրի առաջ էր շարժվում՝ սեղմելով օղակը: Այդ մասին ոչ ոք ինքն իրեն չէր ուզում խոստովանել, բարձրաձայն խոսել այդ մասին, իսկ հարագատներին այդ մասին հեռախոսով փոխանցելու մասին խոսք լինել չէր կարող:

«Զես կարող նրանց ասել՝ գիտե՞ք, ամեն ինչ վատ է, Մատաղիսից Լահիսնջել ենք, այլ ասում էինք՝ Լահիսնջել ենք՝ բայց դեռ հետ ենք գնալու: Դժվար է ինքը քեզ խոստովանել, որ դու Լահիսնջել ես: Այդ պահին չես էլ ուզում հակադրվել քարոզչամեքենային, այլ կայանալ՝ հավատալ, որ դեռ ամեն ինչ լավ է լինելու, որ տակ-

տիկական Լահիսնջ է եւ այլն», - նշում է Գայանեն:

Այնուամենայնիվ, դաշնակցական չգիտի՞ ինչ է պարտությունը, թեւաթափ լինելը, հանձնվելը: Դաշնակցականը իր տեսակով պայքարող է, ու մինչեւ կապիտուլյացիայի չարաբաստիկ օրը նրանք պայքարել են հաղթանակի համար: Երբ տրամադրության անկում էին ունենում, հիշում էին՝ ինչպես Գերմանիան հասավ մինչեւ Մոսկվայի մատույցներ ու պարտվեց պատերազմում: «Ամեն ինչ դեռ առջեւում էր. քանի դեռ պատերազմը շարունակվում էր՝ հաղթելու հավանականություն միշտ կա», - այսպես էին հուսադրվում Դաշնակցության կամավորականները:

«Քանի դեռ պարտված չես, քանի դեռ ուժ ունես, դու կարող ես հաղթել», - ասում է Գայանեն :

Նա զայրանում է, որովհետեւ այս ամենի մեջ վատագույնը ոչ թե Լահիսնջի օրերն էին, այլ չարաբաստիկ Նոյեմբերի 9-ը, որովհետեւ հենց այդ օրն ենք մենք պարտվել:

«Եթե չլինեք Նոյեմբերի 9-ի կապիտուլյացիան, Նոյեմբերի 10-ը դեռ կլինեք պայքարի օր: Բայց մենք պարտության օր ունենք ու հենց դա է ամենացավոտ, ամենատխուր, ամենասպանող իրողությունը: Մենք մի օրում 24 ընկեր ենք կորցրել, բայց այդ ցավը մեզ մոտ վրեժ ու պայքար է ծնել, իսկ Նոյեմբերի 9-ը՝ թեւաթափություն: Մեր ընկերները հանուն հայրենիքի զոհվեցին, այլ ոչ թե նրա համար, որ հողատուն հող տա: Ամեն դեպքում, մենք հաղթելու հավատով էինք մեկնել ռազմաճակատ», - ասում է Գայանեն:



Դաշնակցության «Կամավորական շարժում»-ը մինչեւ Նոյեմբերի 24-ը Արցախում էր:

Գայանեի աչքերի առջեւից չի հեռանում հոկտեմբերի առաջին 2 օրերը, երբ ունեցան առաջին զոհերը, հոկտեմբերի 3-ի գիշերը՝ երբ Մաղափուզի դպրոցի մոտ արկի պայթյունից դպրոցի պատուհանների ապակիների կտորները թափվեցին այդտեղ պատասխարված ու քնած զինվորների վրա: Նաեւ այն խաղաղ պահերը, որ ունենում էին:

«Մենք լավ օրեր էլ ենք ունեցել: Պատերազմի ժամանակ դու ճաշակում ես իրական ընկերության բերկրանքը, ամենասուր կատակները հենց պատերազմի դաշտում են ծնվում, որովհետեւ պետք է ինչ-որ ձեռով հաղթանակներ լարվածությունը», - նշում է Գայանեն:

